<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ի զարգացման ծրագիր 2020-2025

Բովանդակություն

Ընկերության հակիրճ նկարագրություն 3

Շահառուների և շահակիցների կարիքները, մրցակիցներ, SWOT անալիզ 6

Շահառուներ, շահակիցներ և նրանց կարիքները(Աղյ. 1) 6

SWOT վերլուծություն 8

Ուժեղ կողմեր 8

Թույլ կողմեր 8

Հնարավորություններ 9

Խոչընդոտներ 10

Մրցակիցներ 10

Ռազմավարություն 11

Առաքելություն 11

Արժեքներ 11

Տեսլական 11

Ռազմավարական նպատակներ և խնդիրներ 11

Կառուցվածք 13

Նպատակների իրականացման և խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ 14

1.Բժշկական օգնության և սպասարկման որակի շարունակական բարելավում .. 14

Որակի կառավարման համակարգի բարելավում 14

Մարդկային ռեսուրսների զարգացում 16

Բժշկական սարքավորումների արդիականացում և նոր սարքավորումներով հագեցում 17

Առաջատար հիվանդանոցների փորձի տեղայնացում 19

2.Նոր պացիենտների ներգրավում՝ բժշկական օգնության և սպասարկման նոր տեսակների և նոր էֆեկտիվ մեթոդների ներդրումով 21

Լաբորատոր հետազոտությունների ընդլայնում նոր հետազոտությունների ներդրումով 21

Նոր գործիքային հետազոտությունների ներդրում 21

Բուժական նոր մեթոդների և ծառայությունների ներդրում 22

3.Ընկերության կարողությունների զարգացում 23

Ֆինանսատնտեսական գործունեության բարելավում 23

Կառավարման համակարգերի բարելավում և նոր արդյունավետ համակարգերի ներդրում 23
Ենթակառուցվածքների բարելավում 27
Բուժաշխատողների գերազանցության կենտրոնի հիմնում 28
Գործողությունների պլան 29

Ընկերության հակիրճ նկարագրություն

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ: Ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին>> թիվ 1911-Ն որոշման համաձայն <<Գյումրու ավստրիական մանկական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 17.01.1996թ. վերակազմավորման գրանցման օրը՝ 10.01.1997թ. գրանցման թիվ 29.140.00653, վկայական՝ 01 Ա 021817) վերանվանման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը: Ընկերությունը հանդիսանում է նաև <<Շիրակի մարզի Գյումրի ավստրիակաան մանկական հիվանդանոց>> պետական ձեռնարկության և <<ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի Ավստրիական մանկական հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդ:

Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետը:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 288.922.000 (երկուհարյուր ութսունութ միլիոն ինըհարյուր քսաներկու հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 20 հատ՝ 14.446.100 ՀՀ դրամ անվանական սովորական բաժնետոմս: Ընկերության կողմից թողարկված բոլոր 0 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերությունը իրականացնում է բժշկական օգնության հետևյալ ձևերը և տեսակները (ըստ ՀՀ Շիրակի մարզպետարանի տրամադրած տվյալների)

1. Հիվանդանոցային

- Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ՝ ընդհանուր վիրաբուժական (վիրաբուժական, քիթկոկորդականջաբանական, վնասվածքաբանական), մանկաբուժական, վորակենդանացում և նեոնստոլոգիա
- Ծննդօգնություն
- Հղիության ախտաբանական ընթացքի հետ կապված բժշկական օգնություն
- Գինեկոլոգիակաան հիվանդությունների բժշկական օգնության ծառայություն
- Ընդհանուր վիրաբուժական
- Քիթկոկորդականջաբանություն
- Վնասվածքաբանություն և օրթոպեդիա
- Գինեկոլոգիա

2. Արտահիվանդանոցային

- Հղիների հսկողություն
- Մտավոր, հոգեկան, լսողական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ
- Մանկական էնդոկրին դիսպանսեր բուժօգնություն
- Մանակաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող մանկաբարձագինեկոլոգիակաան բուժօգնություն
- Նեղ մասնագետի խորհրդատվություն
- Վիրաբուժական ծառայություն
- Վնասվածքաբանական ծառայություն
- Ուլտրաձայնային հետազոտություն
- Ֆունկցիոնալ հետազոտություններ
- Ռենտգենոլոգիական հետազոտություններ

- Լաբորատոր հետազոտություններ
- Մանրէաբանական հետազոտություններ
- Քիթկոկորդականջաբանական ծառայություններ
- Մորֆոլոգիական հետազոտություններ
- Վերականգնողական ծառայություններ
- Ակնաբուժական ծառայություններ
- Իմունոլոգիական ծառայություններ
- Գինեկոլոգիական ծառայություններ
- Մաշկաբանական ծառայություններ
- Ընտանիքի պլանավորման, վերարտադրողականության ծառայություններ
- Ոչ բժշկական ծառայություններ

Ընկերությունում ունի ընդհանուր վիրաբուժական, մանկաբուժական, մանկական և նորածնային ռեանիմացիայի և մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքները, կանանց կոնսուլտացիայի ծառայությունը և մարզում միակ էնդոկրինոլոգիական և շաքարային դիաբետով երեխաների շարունակական հսկողության և վարման դիսպանսեր կենտրոնը:

Բաժանմունքներ	Մահճակալներ
Վիրաբուժական բաժանմունք	30
Մանկական բաժանմունք	30
Ռեանիմացիոն բաժանմունք	6
Վիրասրահներ	3
Մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունք	30

Շահառուների և շահակիցների կարիքները, մրցակիցներ, SWOT անալիզ

Ընկերության զարգացման նախնական ծրագրի կազմման համար կատարվել է շահառուների և նրանց կարիքների բացահայտում(աղյ.1), SWOT վերլուծություն, մրցակիցների բացահայտում:

Շահառուներ, շահակիցներ և նրանց կարիքները(Աղյ. 1)

Պացիենտներ և ընտանիքի անդամներ	• Մատչելիություն • Առողջության վերականգնում • Բարեխիղճ սպասարկում • Վստահություն, խաբված չլինել • Հասանելիություն • Անվտանգություն • Տեղեկացվածություն • Հարմարավետություն
Ներքին շահառուներ(աշխատակիցներ)	• Արդար վարձատրություն • Մասնագիտական աճ • Կարիերայի աճ • Ինքնահիրացում և ստեղծագործելու հնարավորություն • Որոշումների ընդունման գործընթացում ներգրավվածություն • Աշխատանքային բարենպաստ միջավայր • Աշխատանքի գնահատում • Ղեկավարության հետ հաղորդակցություն

ՀՀ ԱՆ	• Ստանդարտներին համապատասխան որակյալ բժշկական օգնություն և սպասարկում • Պայմանագրով նախատեսված ծավալների շրջանակում բժշկական օգնություն և սպասարկում • Բժշկական օգնության և սպասարկման որակի շարունակական բարելավում • Հաշվետվողականություն • Հետադարձ կապ, խնդիրների ներքևից վերև ներկայացում
Շիրակի մարզպետարան	• Ընկերության արդյունավետության բարձրացում, • Կազմակերպության շարունակական զարգացում • Կառավարելիություն • Հաշվետվողականություն • Շահույթի ապահովում
Դոնորներ՝ առկա և պոտենցիալ	• Նվիրատվությունների արդյունավետ կառավարում • Թափանցիկություն • Հաշվետվեղականություն
Այլ բժշ. հաստատություններ	• Առողջ մրցակցություն • Համագործակցություն
Ապահովագրական ընկերություններ	• Թափանցիկություն

	• Հաշվետվողականություն • Որակյալ բուժօգնություն • Բավարարված հաճախորդներ
Գործընկերներ	• Վստահելիություն • Փոխշահավետ համագործակցություն
Առողջապահության ազգային ինստիտուտ	• Վստահելի տվյալներ • Համագործակցություն
Արտասահմանյան բժշկ. հաստատություններ	• Փորձի փոխանակում • Օտար լեզուների տիրապետող մասնագետներ
ՁԼՄ	• Հասանելիություն • Ժամանակին տեղեկատվության ստացում

SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր

- Մարզում միակ մանկական ռեանիմացիա
- Մարզում միակ մանկական վիրաբուժություն
- Փորձառու բժիշկներ
- Մարզում առաջատար կանանց կոնսուլտացիա ծառայություն
- Միջազգային կապեր
- Օտար լեզուների տիրապետող բժիշկների առկայություն
- Որոշակի տեսակի բուժսարքավորումներով բավարար հագեցվածություն

Թույլ կողմեր

- Կառավարման ավտոմատացման անբավարար մակարդակ
- Տնօրենի և աշխատակիցների հետ թույլ հետադարձ կապ

- Թույլ մարքեթինգ
- Մարդկային ռեսուրսների ոչ արհեստավարժ կառավարում
- Գործընթացների նկարագրերի բացակայություն
- Թույլ տեղեկատվական համակարգեր
- Խրախուսման և պարգևատրումների համակարգի բացակայություն
- Ժամանակակից սարքավորումների բացակայություն
- Լաբորատոր-գործիքային հետազոտությունների արդյունքների հանդեպ թույլ վստահություն
- Ժամանակակից էֆեկտիվ բուժման մեթոդների բացակայություն
- Շենքային անբավարար պայմաններ
- Որոշ նեղ մասնագետների բացակայություն
- Բուժաշխատողների ոչ բավարար համակարգչային գիտելիքներ
- Միջին բուժանձնակազմի ոչ բավարար գիտելիքներ և հմտություններ
- Շուրջօրյա (24/7 ռեժիմով) լաբորատոր-գործիքային հետազոտությունների ծառայության ոչ պատշաճ իրականացում

Հնարավորություններ

- Համապարփակ ապահովագրության ներդրման հեռանկար
- Պետության կողմից սահմանափակ բյուջեի սկզբունքի աստիճանական վերացման քաղաքականություն
- Առողջապահության նախարարության կողմից բուժման ընթացակարգերի շարունակական ներդրման գործընթաց
- Առողջապահական ոլորտի ֆինանսավորման աճ
- Վարկերի հասանելիություն
- Սուբվենցիոն ծրագրերի հնարավորություններ
- Միջազգային դոնորների առկայություն
- Ծնելիության խթանման պետական ծրագրեր
- Տուրիստական ներհոսք
- Շահակիցների կազմի ընդլայնում
- Նոր մասնաշենքի կառուցման ծրագիր

Խոչընդոտներ

- Պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման սահմանափակ բյուջեի սկզբունք
- Բժշկական օգնության ծառայության իրական ծախսերի և հատուցման գների անհամապատասխանություն
- Աճող մրցակցություն
- Մասնագետների արտահոսք

Մրցակիցներ

1. Ախուրյանի մոր և մանկան հիվանդանոց
2. Մասնավոր սեկտորի լաբորատոր-գործիքային հետազոտություններ իրականացնողներ (մոտ 6)
3. ՀՀ-ում գործող այլ մանկական հիվանդանոցներ
4. Մարզային այլ բժշկական կազմակերպություններ

Ռազմավարություն

Առաքելություն

Առողջ մանկության և մայրության ապահովում՝ որակյալ բժշկական օգնության տրամադրումով յուրաքանչյուր պացիենտին, որը հիմնված է ժամանակակից գիտահեն բժկագիտության վրա:

Արժեքներ

- Պացիենտակենտրոնություն
- Հասանելիություն
- Թափանցիկություն
- Շարունակական զարգացում
- Արհեստավարժություն
- Հաշվետվողականություն

Տեսլական

Տարածաշրջանում լինել առաջատար դիրք ունեցող մոր և մանկան բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն

Ռազմավարական նպատակներ և խնդիրներ

1. Բժշկական օգնության և սպասարկման որակի շարունակական բարելավում
    - Որակի կառավարման համակարգի բարելավում
    - Մարդկային ռեսուրսների զարգացում
    - Բժշկական օգնության և սպասարկման իրականացում տեղական և միջազգային ստանդարտներին համապատասխան
    - Բժշկական սարքավորումների արդիականացում և նոր սարքավորումներով հագեցում
    - Առաջատար հիվանդանոցների փորձի տեղայնացում

2. Նոր պացիենտների ներգրավում՝ բժշկական օգնության և սպասարկման նոր տեսակների և նոր էֆեկտիվ մեթոդների ներդրումով
    - Լաբորատոր հետազոտությունների ընդլայնում նոր հետազոտությունների ներդրումով
    - Նոր գործիքային հետազոտությունների ներդրում
    - Բուժական նոր մեթոդների ներդրում
3. Ընկերության կարողությունների զարգացում
    - Ֆինանսատնտեսական գործունեության բարելավում
    - Կառավարման համակարգերի բարելավում և նոր արդյունավետ համակարգերի ներդրում
    - Ենթակառուցվածքների բարելավում
    - Բուժաշխատողների գերազանցության կենտրոնի հիմնում

Կառուցվածք


Գործադիր տնօրեն
Որակի բարելավման աշխատախումբ
Կարակների վերահսկողության մասնագետ
Գլխավոր բուժքույր
Հիվանդանոցային բաժանմունքներ
Ընդունարան
Որոշակի ծառայություններ և նեղ մասնագիտական կաբինետներ
Մանկական վերականգնողական ծառայություն
Կլինիկական կոնսուլտացիա
Վարչական մաս
Օժանդակող ծառայություններ
Վիրաբուժական բաժանմունք
Մանկական և նորածնային վերակենդանացման բաժանմունք
Մանկական բաժանմունք
Վիրահատական բլոկ
Մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունք
Սինեստաձգի բուժզննության սենյակ
Ուլտրաձայնային
ՌԼՖ
Կլինիկո-բիոքիմիական լաբորատորիա
Իմունոլոգիական լաբորատորիա
Դաբոհիստոլոգիական և բջջաբանական լաբորատորիա
Մանրէաբանական լաբորատորիա
Քիթ-կոկորդ-ականջաբանական կաբինետ
Նյարդաբանական կաբինետ
Սրտաբանական կաբինետ
Աչքաբանական կաբինետ
Ակնաբուժական
Ներզատաբանական
Ֆինանսներ և հաշվապահություն
ՏՏ մասնագետ
ՄՈԿ
Մարքետինգ և PR
Տվյալների թվայնացման խումբ
Ներհիվանդանոցային դեղատուն
Լվացքատուն
Տնտեսական մաս
Բիոհինձեսեր

Նպատակների իրականացման և խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ

1.Բժշկական օգնության և սպասարկման որակի շարունակական բարելավում

Որակի կառավարման համակարգի բարելավում

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների համար մրցունակ լինելու և կազմակերպությունը զարգացնելու համար, առողջապահական ոլորտում ներկայիս միջավայրը և փոփոխությունների կանխատեսումները ուղղակի թելադրում են, որակյալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու և որակի շարունակական բարելավման անհրաժեշտությունը: Որակի բարելավումը պլանավորման և ներդրման համակարգային մոտեցում է կատարողականի շարունակական բարելավման նպատակով: Որակի շարունակական բարելավման նպատակով կիրառվելու է Դեմինգի մոդելը՝ պլանավորում, կատարում, ստուգում, բարելավում: Որակի բարելավման նպատակով կիրառվելու է առաջացած բացթողումների, սխալների, և համարյա սխալվելու դեպքերի արմատական պատճառային վերլուծություններ, և այդ վերլուծությունների հիման վրա իրականացվելու են բարեփոխումներ՝ անցանկալի դեպքերի կրկնության բացառման նպատակով:

Որակի բարելավման նպատակով իրականցվելու է բարելավման նպատակների սահմանում և այդ նպատակներին հասնելու համար գործողությունների պլանավորում և իրականացում:

Հիվանդանոցում կիրառվող բուժման մեթոդները համեմատվելու են ՀՀ և արտասահմանյան առաջատար մանկական հիվանդանոցներում կիրառվող բուժման մեթոդների հետ, և իրականցվելու է առավել էֆֆեկտիվ մեթոդների ընտրություն և տեղայնացում:

Աշխատանքների արդյունավետության գնահատման համար հիմք է ընդունվելու կատարողականի ցուցանիշները, սահմանվելու է նպատակներ՝ առավել բարձր ցուցանիշներ ապահովելու համար, մշակվելու է այդ ցուցանիշները ապահովելու համար գործողությունների պլան:

Պացիենտների անվտանգության բարձրացման նպատակով ներդրվելու է պացիենտների իդենտիֆիկացիայի նոր մեթոդ՝ իդենտիֆիկացիա 2 բնորոշիչով (օրինակ անուն ազգանուն և ծննդյան տարեթիվ): Այն ապահովելու է յուրաքանչյուր հիվանդին ճիշտ դեղորայքով և բուժման տրամադրումը: Բուժաշատողների միջև հաղորդակցության բարձրացման նպատակը հիվանդին վերաբերվող կարևոր տվյալների արագ հաղորդումն է ճիշտ մարդկանց և ճիշտ ժամանակին: Այդ նպատակով ներդրվելու է տվյալների փոխանցման թվային համակարգ: Դողորայքի օգտագործման անվտանգության բարձրացման նպատակով մինչև միջամտության իրականացումը, սխալներից խուսափելու նպատակով, կատարվելու է ներարկիչների, հաբերի բաժակների պիտակավորում: Դեղորայքի պահման պահարանում տարանջատել "նման տեսք" և "նման հնչողություն" ունեցող դեղորայքները: Վարակների կանխման նպատակով իրականացվելու է ձեռքերի մշակման, արյան միջոցով փոխանցվող վարակների կանխարգելման, վիրահատությունից հետո առաջացող վարակների կանխարգելման, կատետերիազացիայից հետո միզուղիների վարակների կանխարգելման ուղեցույցեր: Վիրահատությունների անվտանգության ապահովումը նպատակ ունի ապահովել ճիշտ հիվանդին ճիշտ վիրահատություն: Այդ նպատակով, մինչև վիրահատությունը իրականացվելու է հիվանդի մարմնի համապատասխան հատվածում նշում մարկերի օգնությամբ: Վիրահատարանում հստակ սահմանագծել ստերիլության տարբեր աստիճաններ ունեցող գոտիները, կատարել մաքուր և օգտագործված գործիքների տեղաշարժման ուղիների տարանջատում, որդեգրել 1 վիրահատության համար գործիքների 1 աշխատանքային հավաքածուի քաղաքականություն: Անձնակազմին ապահովել միայն վիրահատական բլոկում կրելու համար նախատեսված արտահագուստով և կոշիկներով, դրանով աջակցել սանիտարական նորմերի պահպանմանը: Վիրահատարանը ապահովել տաք ջրով, ապահովել անհրաժեշտ միկրոկլիման:

Բժշկական օգնության ժամանակին տրամադրման և հերթերից խուսափելու նպատակով ներդրվելու է պացիենտների հերթագրման էլեկտրոնային համակարգ բջջային հավելվածի միջոցով:

Մարդկային ռեսուրսների զարգացում

Մարդկային ռեսուրսների զարգացման արդյունավետ իրականացման նպատակով կատարվելու է մարդկային ռեսուրսների պլանավորում՝ համապատասխան ընկերության ռազմավարական նպատակներին: Մարդկային ռեսուրսների պլանավորումը նպատակ է ունենալու կազմակերպության համար ապահովել բարձր մասնագիտացված, մոտիվացված, հավատարիմ աշխատակիցներ, նրանց ընկերությունում ներգրավման, զարգացման ու պահպանման միջոցով:

Յուրաքանչյուր մասնագիտության համար մշակվելու է աշխատանքային անձնագրեր, որը ներառելու է անհրաժեշտ մասնագիտական կոմպետենտությունների ցանկը: Այն հիմք է հանդիսանալու նոր աշխատակիցների ներգրավման ժամանակ պայմանների սահմանման, աշխատակիցների անհատական զարգացման պլանների կազմման համար:

Յուրաքանչյուր աշխատակցի համար ստեղծվելու է իր հմտությունների մասին տեղեկություններ պարունակող հմտությունների բազա: Այն նպաստելու է աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացման նպատակային իրականացման համար:

Նոր աշխատակիցների ներգրավումը իրականացվելու է թափանցիկ, մրցակցային, ոչ խտրական սկզբունքով: Մրցույթների ժամանակ գնահատվելու է ոչ միայն մասնագիցների տեսական գիտելիքները և գործնական հմտությունները, այլ նաև մոտիվացիան և զարգացման ունակությունը:

Յուրաքանչյուր աշխատակցի համար կազմվելու է անհատական զարգացման պլան: Մասնագիտական զարգացումը իրականացվելու է ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ձևով: Հիվանդանոցում պարբերաբար կազմակերպվելու է սեմինարներ, կլոր սեղաններ, կլինիկական դեպքերի քննարկումներ: Շարունակական մասնագիտական զարգացման նպատակով վերապատրաստումներ է իրականացվելու ՀՀ-ում և

արտասահմանյան կլինիկաներում: Վերապատրաստումներից հետո կազմակերպվելու է նոր գիտելիքների և հմտությունների ներկայացում կոլեգաներին: Վերապատրաստումները իրականացվելու են նաև Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոցում հրավիրյալ մասնագետների մասնակցությամբ: Հաշվի առնելով էլեկտրոնային առողջապահական համակարգի ներդրման հեռանկարը, իրականացվելու է միջին և ավագ բուժաշխատողների համակարգչային գիտելիքների ուսուցում:

Առավել կարևոր և առաջնահերթ խնդիրների լուծմանն ուղղված վերապատրաստումները, մասնակի կամ ամբողջությամբ, հատուցվելու են ընկերության կողմից:

Փորձառու մասնագետների կողմից իրականացվելու է մենթորություն սկսնակ մասնագետների նկատմամբ:

Բոլոր աշխատակիցների համար ապահովվելու է հավասար հնարավորություններ մասնագիտական զարգացման, կարիերայի աճի համար, որը հիմնված է լինելու բացառապես կարողությունների հիման վրա:

Ներդրվելու է 360° գնահատման համակարգ: 360° գնահատումը հետադարձ կապի պրոֆեսիոնալ հնարավորություն է, որը թույլ է տալիս աշխատակիցների որոշակի խմբի գնահատել իրենց գործընկերոջ աշխատանքը: 360° գնահատման նպատակն է գնահատել աշխատակիցներին, ինչպես նաև աշխատակիցներին հնարավորություն տալ հասկանալ թե կոլեգաները ոնց՞ են գնահատում իր աշխատանքը:

Բժշկական սարքավորումների արդիականացում և նոր սարքավորումներով հագեցում

Բուժական էֆֆեկտիվ մեթոդների ներդրման և բժշկական օգնության և սպասարկման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է որոշակի սարքավորումների փոխարինում նոր մոդելներով, ինչպես նաև նոր սարքավորումների ձեռք բերում: Սարքավորումների ձեռք բերման ֆինանսական աղբյուրներ են հանդիսանալու սեփական միջոցները՝ նոր էֆֆեկտիվ մեթոդների

ներդրումից գոյացած շահույթի և արդյունավետության բարձրացման արդյունքում կատարված խնայողություններ, կենտրոնական գնումներ, նվիրատվություններ:

- Ստացիոնար և շարժական թվային ռենգեն սարքերի ձեռքբերում
  Ներկայումս Ռենտգեն կաբինետում առկա ստացիոնար ռենտգեն ապարատը գտնվում է անսարք վիճակում(մոտավորապես 2 տարի), իսկ տեղափոխվող ռենտգեն սարքը գտնվում է թերի աշխատանքային վիճակում, որը հնարավորություն չի տալիս կազմակերպել պացիենտների պատշաճ որակյալ ռենտգեն ծառայության մատուցում, և հաճախակի է լինում հիվանդների ուղղորդումը այլ բժշկական կազմակերպություններ անհրաժեշտ ռենտգեն հետազոտության անցկացման համար, որը անհարմարություններ է ստեղծում և պացիենտների և բուժաշխատողների համար, առաջացնում է ֆինանսական կորուստներ: Հիվանդանոցը կարիք ունի ժամանակակից թվային ռենտգեն սարքավորումների, որը հանդիսանում է հրատապ լուծման ենթակա խնդիր:
- Լաբորատոր սարքավորումներով հագեցում
  Լաբորատորիայում 24/7 ռեժիմով աշխատանքը ապահովվում է մասնակի, քանի որ հիվանդանոցային հերթապահություն ընդգրկած են միայն լաբորանտ-բուժքույրերը: Անհետաձգելի դեպքերում լաբորատորիայի աշխատանքի 24/7 ռեժիմով ապահովելու նպատակով նախատեսվում է լաբորատորիան հագեցնել թվային մանրադիտակով, որը հնարավորություն կտա հեռահար կերպով ապահովել անհրաժեշտ լաբորատոր հետազոտությունների ամբողջ ծավալը: Թվային մանրադիտակը հնարավորություն է ստեղծելու նաև, հիստոլոգիական հետազոտությունների արդյունքների ճշգրտման նպատակով իրականացնել երկրորդ կարծիքի հարցում: Անհետաձգելի դեպքերում 24/7 ռեժիմով լաբորատոր հետազոտությունների արդյունքների ապահովման նպատակով նախատեսվում է ձեռք բերել կարիքներին համապատասխան ավտոմատ լաբորատոր անալիզատոր:

- Էլեկտրաօպտիկական փոխարկիչ ռենտգեն սարք

Փոքր վիրահատական մեթոդների ներդրման համար անհրաժեշտ է վիրահատարանը համալրել էլեկտրոօպտիկական փոխակերպիչ ռենտգեն սարքով: Այն նպաստելու է ընդհանուր անզգայացման տևողության, մահճակալ օրերի, դեղորայքի ծախսի կրճատմանը և բժշկական օգնության և սպասարկման արդյունավետության բարձրացմանը:

- ՔԿԱ Էնդոսկոպ

  Քիթկոկորդականջաբանական ծառայության որակի բարելավման, Էնդոսկոպիկ մեթոդների ներդրման, նոր պացիենտների ներգրավման նպատակով նախատեսվում է ձեռք բերել է Էնդոսկոպիկ սարք:

- Հիստերոսկոպ

  Գինեկոլոգիական ծառայության որակի բարելավման նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել հիստերոսկոպ

- Մամոգրաֆիկ սարք

  Կրծքագեղձի հիվանդությունների վաղ ախտորոշման նպատակով ձեռք է բերվելու մամոգրաֆիկ սարք: Այն նպաստելու է ենտարածաշրջանում կրծքագեղձի հիվանդությունների պատճառով մահացության նվազեցմանը, նոր պացիենտների ներգրավմանը և եկամուտների ավելացմանը:

Առաջատար հիվանդանոցների փորձի տեղայնացում

Որակի բարելավման անբաժանելի մաս է կազմում բենչմարկինգը: Կատարվելու է ընկերության գործունեության կատարողականի ցուցանիշների համեմատում ինչպես ՀՀ, այնպես էլ արտասահմանյան հիվանդանոցների կատարողականի ցուցանիշների հետ: Այն օգնելու է բացահայտել թէ ինչպես են այդ կազմակերպությունները հասել նման արդյունքների և այն օգտագործել սեփական կատորաղականի բարելավման և արդյունավետության բարձրացման համար:

Մոր և մանկան ավստրիական հիվանդանոցում կիրառվող բուժման մեթոդների շարունակական զարգացման և արդիականացման, այլ հիվանդանոցներում կիրառված կառավարման հաջողված փորձի, Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոցում կիրառման նպատակով համագործակցություն Երևանյան առաջատար կլինիկաների հետ: Կազմակերպել նեղ մասնագետների և

մասնագիտական խմբերի այցեր՝ դեռևս Մոր և մանկան ավստրիական հիվանդանոցում չկիրառվող մեթոդների ներդրման գործընթացի խթանման նպատակով:

Շարունակվելու է սերտ համագործակցությունը Ավստրիական կողմի հետ: Նախատեսվում է համագործակցության շրջանակի ընդլայնում, որն ընդգրկում է Ավստրիական առաջատար կլինիկաներ Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոցի բժիշկների խիստ նպատակային այցելություններ, վերապատրաստումներ, ավստրիացի բժիշկների այց և աշխատանքային շփումներ տեղի մասնագետների հետ:

2.Նոր պացիենտների ներգրավում՝ բժշկական օգնության և սպասարկման նոր տեսակների և նոր էֆեկտիվ մեթոդների ներդրումով

Լաբորատոր հետազոտությունների ընդլայնում նոր հետազոտությունների ներդրումով

Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոցի լաբորատոր հետազոտությունների արդյունքների հանդեպ վստահության բարձրացման և արդյունքների հավաստիության մեծացման նպատակով լաբորատորիան հագեցնել, կարիքներին համապատասխան, ժամանակակից ավտոմատ անալիզատորներով, լաբորատորիայում ապահովել որակի կառավարման ISO 15189 ստանդարտին համապատասխան պայմաններ: Այն նպաստելու է Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոցում բժշկականական օգնություն ստացող պացիենտներին այլ լաբորատորիաների ուղեգրման հոսքը հնարավորինս վերադրաձնել Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց, նոր պացիենտներ ներգրավել, ավելացնել ֆինանսական մուտքերը:

Նոր գործիքային հետազոտությունների ներդրում

Հաշվի առնելով սրտի բնածին արատների և հիվանդությունների վաղ ախտորոշման կարևորությունը՝ նախատեսվում է է ներդնել մանկական տարիքի պացիենտների սրտի էխոգրաֆիկ ծառայություն:

Հաշվի առնելով, որ հիվանդանոցում իրականացվում է այնպիսի պացիենտների բուժօգնություն, որոնք գտնվում են թրոմբոէմբոլիկ բարդությունների առաջացման բարձր ռիսկային խմբում, անհրաժեշտ է, այդ բարդությունների ժամանակին կանխարգելման նպատակով, լայնորեն կիրառել անոթների դուպլեքս հետազոտությունը:

Գինեկոլոգիական հիվանդությունների ախտորոշման նպատակով նախատեսվում է ձեռք բերել հիստերոսկոպ: Այն անհրաժեշտ է նաև անպտղության պատճառների ախտորոշման, և փոքր ինվազիվ վիրահատություններ կատարելու համար:

Տարածաշրջանում կրծքագեղձի հիվանդությունների վաղ ախտորոշման համար ներդրվելու է մամոլոգիկ ծառայությունը:

Բուժական նոր մեթոդների և ծառայությունների ներդրում

Լայնորեն կիրառել լապարասկոպիկ վիրահատական մեթոդը մանկական պրակտիկայում(ապենդիցիտի բուժում), ներդնել էնդոսկպոպիկ վիրահատական մեթոդներ քիթկոկորդականջաբանական ծառայությունում, մանկական վնասվածքաբանական ծառայությունում ներդնել էլաստիկ մեխերեվ օստեոսինթեզի մեթոդը: Վորոնշյալ մեթոդների ներդրումը հանգեցնելու է ծառայությունների մատուցման էական որոկական բարելավման, մահճակալ օրերի կրճատման, պացիենտների բավարարվածության աստիճանի աճի, նոր հաճախորդների ներգրավմման, ծախսերի կրճատման:

Հնարավորինս մեծացնել գինեկոլոգիական հիվանդությունների վիրահատական բուժման մեջ լապարոսկոպիկ վիրահատությունների ծավալը: Ներդնել հիստերոսկոպիայի մեթոդը: Ծնունդաբերական ցավի հսկողության համար ներդնել էպիդուրալ ցավազրկման մեթոդը, որը ներկայումս լայնորեն կիրառվում է Երևանյան լավագույն կլինիկաներում: Հաշվի առնելով անպտղության հիմնախնդիրը և անպտուղ զույգերի քանակի ավելացումը, զարգացնել վերարտադրողության ծառայությունը, որը հիմք կհանդիսանա հետագայում արտամարմնական բեղմնավորման կենտրոնի հիմնադրման համար: Հիմնել կրծքագեղձի հիվանդությունների ախտոշման և բուժման ծառայություն, և այն ապահովել ժամանակակից մամոգրաֆիկ սարքավորումով, որը կլինի եզակի մարզում:

3.Ընկերության կարողությունների զարգացում

Ֆինանսատնտեսական գործունեության բարելավում

- Բաժանմունքների, ծառայությունների, նեղ մասնագիտական կաբինետների ֆինանսական արդյունավետության գնահատում
- Վնասաբեր ծառայությունների վնասաբերության պատճառա-հետևանքային կապի վերլուծություն և եկամտաբերության ապահովմանը միտված ծրագրի մշակում
- Մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացում՝ շահութաբերության մեծացման նպատակով
- Որոշ ոչ բուժական գործառույթների իրականացման համար ծախսի համեմատում նմանատիպ գործառույթներ իրականացնող այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների գների հետ՝ խնայողության հնարավորության դեպքում այդ գործառույթների արտապատվիրակում(աուտսորս):
- Բյուջեում մարքեթինգի, խրախուսման և պարգևատրման իրականացման համար ծախսերի նախատեսում
- Ֆինանսական մուտքերի ավելացման նպատակով նոր ծառայությունների ներդրում
- Վճարովի մատուցվող ծառայությունների գների վերանայում
- Միջին բուժանձնակազմի գերազանցության կենտրոնի հնարավորությունների օգտագործում՝ լրացուցիչ ֆինանսական հոսքեր ներգրավելու նպատակով

Կառավարման համակարգերի բարելավում և նոր արդյունավետ համակարգերի ներդրում

Կառավարման արդյունավետության բարձրացման, կառավարման թափանցիկության ապահովման, խնդիրների բազմակողմանի վերլուծության,

որոշումների կայացման գործընթացում աշխատակիցների ներգրավվման, բժշկական օգնության և սպասարկման որակի շարունակական բարելավման նպատակով ստեղծել աշխատանքային խմբեր:

Գործընթաների հաստակ իրականացնելու և անցանկալի դեպքերի ռիսկը նվազեցնելու նպատակով մշակվելու և ներդրվելու են հիմնական գործընթացների քարտեզներ և գործընթացների նկարագրեր, ստուգաթերթեր, աշխատանքային հրահանգներ: Յուրաքանչյուր գործընթացի համար սահմանվելու է անհրաժեշտ մարդկային ռեսուրսը, մեքենա-սարքավորումները, մեթոդները, միջոցները և միջավայրը:

Կազմակերպության կառավարման անբաժանելի մաս է ռիսկերի կառավարումը: Իրականացվելու է ռիսկերի բացահայտում, գնահատում և ռիսկերի նվազեցման ուղղված՝ ուղղիչ և պրոֆիլակտիկ գործողություններ: Պրոֆիլակտիկ գործողությունների հիմքում դրվելու են համակարգային փոփոխությունները:

Աշխատանքի արդյունավետության բարձրացման, աշխատանքների վերահսկելիության և որակի շարունակական բարելավման նպատակով սահմանվելու է կատարողականի չափման ցուցիչներ, ինչպիսիք են՝ մահճակալների շրջապտույտը, վերահոսպիտալացման ցուցանիշը, պացիենտների բավարարվածության ցուցիչը և այլն:

Փոփոխությունները իրականացնելու համար բացահայտել աշխատողներին անհարաժեշտ նոր գիտելիքները, իրականացնել նոր գիտելիքների հաղորդում: Իրականացնել փոփոխությունների արդյունքների և նոր ստեղծված հնարավորությունների հաղորդակցում:

Մոտիվացիոն գործիքների ներդրում անհատական, խմբային և կազմակերպության մակարդակներում: Գործողություններ, որոնք ուղղված են աշխատանքային սթրեսի նվազեցմանը:

Կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրումը նպաստելու է կազմակերպության ռազմավարական պլանավորմանը, կատարողականի

գնահատմանը, որոշումներ կայացնելուն, ազգաբնակչության իրազեկվածության մակարդակի աճին: Կառավարման տեղեկատվական համակարգերը ունենալու են տվյալների հավաքագրման, մշակման, արխիվացման որոնման, ինչպես նաև տարածման գործառույթներ: Օգտագործելով կազմակերպությունում առկա ինտերնետ ցանցը ստեղծել սարքավորումների համացանց, որը կնպաստի հաղորդակցության բարձրացմանը, կնվազեցնի ծախսերը, կբարելավի կատարողականը: Հետազոտությունների արդյունքների արագ և նպատակային փոխանցման, պահպանման նպատակով գործարքվելու է տվյալների փոխանցման էլեկրոնային համակարգ: Հետազոտությունների արդյունքները փոխանցվելու են ստորաբաժանումներ էլեկրոնային եղանակով, և տպվելու են բաժանմունքներում, որը կնվազեցնի արդյունքների ստացման ժամանակը, միջին բուժպերսոնալի համար կխնայի ժամանակ:

Պլանային հիվանդների ընդունելության պլանավորում, հիմք ընդունելով ծառայություններում, բաժանմունքներում և վիրահատարանում ծանրաբեռնվածությունը, որը կնպաստի պացիենտների սպասելաժամի կրճատմանը, աշխատանքային ծանրաբեռնվածության օպտիմալ հավասարաչափ բաշխմանը շաբաթվա օրերի ընթացքում, մահճակալ օրերի քանակի նվազման՝ ծախսերի կրճատման:

Պահեստների արդյունավետ էլեկտրոնային կառավարում, որը կնպաստի սպասված պահանջարկի լիարժեք բավարարման, անընդհատության ապահովում, դեղորայքի և բժշկական պարագաների ներհիվանդանոցային շրջանառությանը կդարձնի կանխատեսելի, պակասորդների կանխում: Այն ենթադրում է ներդնել դեղորայքի և բժշկական պարագաների ընդունումից մինչև վերջնական սպառումը շտրիխ կոդերի միջոցով: Այն հնարավորություն է ստեղծում պահեստում դեղորայքի և բժշկական պարագայի սպառումը ավելի վերահսկելի դարձնելուն, և կնպաստի մատակարարման շղթայի անընդհատության ապահովմանը:

Մարքեթինգ

Ռազմավարական պլանավորմանը համահունչ կազմակերպությունը կարիք ունի մարքեթինգային ռազմավարության: Մարքեթինգի հիմնական նպատակներն են լինելու պացիենտների և նրանց ընտանիքի անդամների կարիքների գնահատումը, լոյալության(նվիրվածության) բարձրացումը նրանց բավարարվածության գնահատման (սիստեմատիկ հարցումներ, գաղտնի հաճախորդ և այլն) հիման վրա պահանջմունքների շարունակական բարելավման, բրենդինգի և հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի միջոցով, թվային մարքեթինգի գործիքների լայն կիրառմամբ:

Պրոդուկտ Բժշկական օգնության և սպասարկման նոր ծառայությունների նախագծում, գործող ծառայություններից փաթեթների կազմումը (մի քանի ծառայությունների միացումը և միասնական գնի սահմանում)

Գին Հիմք ընդունելով օրենսդրությամբ, իրավական ակտերով սահմանված բժշկական օգնության և սպասարկման գնագոյացումը, վարել շուկայում մաքսիմալ մասնաբաժին ունենալու քաղաքականություն, ծառայություն/որակ լավագույն հարաբերակցության քաղաքականություն: Գործընկեր բանկի միջոցով պացիենտների համար ստեղծել հնարավորություն վճարովի ծառայությունների ապառիկ վճարումներ կատարելու համար:

Առաջխաղացում

Գովազդ- Մատուցվող ծառայությունների, հիվանդությունների ախտորոշման, բուժման հնարավոր մեթոդների մասին պատմող ուսուցողական բրոշյուրներ և պոստեռներ, կաբինետների մոտ տվյալ կաբինետում մատուցվող ծառայությունների մասին պատմող ինֆորմացիոն վահանակներ, QR-կոդերով դիտվող տեսահոլովակներ հետազոտության մասին:

Միջոցառումներ- Առողջապահական ոլորտային միջազգային օրերին թեմատիկ միջոցառումների կազմակերպում, ցուցահանդեսների և էքսկուրսիաների

կազմակերպում ազգաբնակչության լայն խմբերի ներգրավումով: Կազմակերպվելու է բաց դռների օրեր, այցել համայնքներ հիվանդությունների վաղ հայտնաբերման համար:

Հասարակության հետ կապեր – Հիվանդանոցը կարիք ունի նոր և ժամանակակից ինտերնետային կայքի, որը կայքի այցելուների տրամադրելու է լիարժեք և հավաստի տեղեկատվություն, ունենալու է հետադարձ կապի հնարավորություն, ունենալու է հաճախ տրվող հարցեր և հարց բժշկին բաժինները: Կայքը ունենալու է ուսուցողական տեսահոլովակներով հագեցած տեսադարան: Օգտագործվելու է սոցիալական ցանցերը հասսարակության հետ կապի ուժեղացման նպատակով: Աշխատանքային կոլեկտիվի հետ համատեղ որոշվելու է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտ և իրականացվելու այդ ոլորտում գործունեություն: Իրականացվելու է սերտ համագործակցություն զանգվածային լրատվամիջոցների հետ:

Ենթակառուցվածքների բարելավում

- Կտուրի վնասված հատվածների վերանորոգում սուբվենցիոն ծրագրերով:
- Յուրաքանչյուր բաժանմունքով կահավորել 1 հիվանդասենյակ, իր սանհանգույցով, հարմարեցված ֆիզիկական սահմանափակումներով անձանձ համար:
- Արևային էլեկտրական կայանների տեղադրում՝ էներգետիկ ծախսերի կրճատման, խնայողությունների և ինքնաբավության նպատակով:
- Արևային ջրատաքացուցիչների տեղադրում տաք ջրի պահանջի ծավալին համապատասխան:
- Թթվածնի արտադրության կայան ունենալու նպատակահարմարության գնահատում:

Բուժաշխատողների գերազանցության կենտրոնի հիմնում

Բուժաշխատողների գերազանցության կենտրոնի նպատակն է լինելու ապահովել Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոցի, այլ բժշկական կազմակերպությունների բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման ապահովումը՝ տեսական գիտելիքների հաղորդման, հմտությունների զարգացան միջոցով: Նշված կենտրոնում գործնական հմտություններ կարող են ձեռք բերել նաև նորավարտ բուժքույրերը և բուժակները: Բուժաշխատողների գերազանցության կենտրոնում իրականացվելու է ֆորմալ(ՇՄՁ կրեդիտների տրամադրումով) և ոչ ֆորմալ կրթական ծրագրեր: Բուժաշխատողների գերազանցության կենտրոնում վերապատրաստումների կազմակակերպման նպատակով պլանավորվում է համագործակցություն Առողջապահության ազգային ինստիտուտի հետ: Բուժաշխատողների գերազանցության կենտրոնի նյութա-տեխնիկական բազան նպաստավոր պայմաններ կստեղծի, սեմինարների, դեղագործական կազմակերպությունների կողմից կազմակերպվող ներկայացումների և բժշկական բնագավառի հետ առընչվող այլ միջոցառումների անցկացման համար վարձակալության հանձնելու միջոցով լրացուցիչ ֆինանսական հոսքեր ներգրավելու համար:

Գործողությունների պլան

Խնդիրներ	Գործողություն	Ֆինանսավորման աղբյուր	Ակընկալվող արդյունք	Պատասխանատու	Ժամանակացույց
Որակի կառավարման համակարգի բարելավում	Որակի գնահատման համակարգի մշակում	Չի պահանջվում	Որակի գնահատման չափորոշիչ	Տնօրեն Որակի բարելավման աշխատախումբ	2020
	Իրականացվող ծառայությունների որակի գնահատում	Չի պահանջվում	Իրականացվող ծառայությունների գնահատված որակ	Տնօրեն Որակի բարելավման աշխատախումբ	2020
	Որակի բարելավման նպատակների սահմանում	Չի պահանջվում	Որակի բարելավման սահմանված նպատակներ	Տնօրեն Որակի բարելավման աշխատախումբ	2021
	Պացիենտների անվտանգության համակարգի մշակում և ներդրում	Չի պահանջվում	Պացիենտների անվտանգության համակարգ	Տնօրեն Որակի բարելավման աշխատախումբ	2021
	Պացիենտների և նրանց ընտանիքի անդամների կրթությանը ուղղված	Չի պահանջվում	Բուժօգնության արդյունավետության բարձրացում	Տնօրեն Որակի բարելավման աշխատախումբ	2020

	տեղեկատվական թերթիկների մշակում և ներդրում				
	Պացիենտների հերթագրման էլեկտրոնային համակարգի ստեղծում	Չի պահանջվում	Սպասման ժամանակի կրճատում	Տնօրեն SS մասնագետ	2021
Մարդկային ռեսուրսների զարգացում	Աշխատանքային անձնագրերի ստեղծում	Չի պահանջվում	Աշխատանքային անձնագրեր	Տնօրեն ՄՌԿ Բաժանմունքի վարիչներ	2021
	Հմտությունների բազայի մշակում	Չի պահանջվում	Աշխատողների բացահայտված մասնագիտական կարողությունների	Տնօրեն ՄՌԿ Բաժանմունքի վարիչներ	2020
	Զարգացման անհատական պլանների մշակում	Չի պահանջվում	Անհատական զարգացման պլան	Տնօրեն ՄՌԿ Բաժանմունքի վարիչներ Աշխատակից	2021
	360º գնահատման համակարգի մշակում	Չի պահանջվում	Աշխատողների աշխատանքի օբյեկտիվ գնահատական	Տնօրեն ՄՌԿ	2022
	Խրախուսման և պարգևատրման համակարգի մշակում	Չի պահանջվում	Խրախուսման և պարգևատրման չափորոշիչ	Տնօրեն ՄՌԿ Արհեստակցական միություն	2021

Բժշկական սարքավորումների արդիականացում և նոր սարքավորումներով հագեցում	Ստացիոնար թվային ռենտգեն սարքի ձեռք բերում	Սեփական միջոցներ (25.000.000 ՀՀ դրամ)	Նոր պացիենտներ Որակի բարձրացում Տարեկան 1.000.000 խնայողություն 7.000.000 հավելյալ մուտքեր	Տնօրեն	2020
	Շարժական թվային ռենտգեն սարքի ձեռք բերում	Սեփական միջոցներ (10.000.000 ՀՀ դրամ)	Որակի բարելավում	Տնօրեն	2022
	Թվային մանրադիտակի ձեռք բերում	Սեփականան միջոցներ (500.000 ՀՀ դրամ)	24/7 ռեժիմով հասանելի կլինիկական լաբորատորիա	Տնօրեն	2020
	Էլեկտրոպտի:կական փոխակերպիչ ռենտգեն սարքի ձեռք բերում	Սեփական միջոցներ (15.000.000 ՀՀ դրամ)	Մահճակալ օրերի կրճատում Ծախսերի կրճատում	Տնօրեն	2021
	ՔԿԱ Էնդոսկոպի ձեռք բերում	Սեփական միջոցներ (5.000.000 ՀՀ դրամ)	Նոր պացիենտներ Որակի բարելավում 2.000.000 հավելյալ մուտքեր	Տնօրեն	2021
	Հիստերոսկոպի ձեռք բերում	Սեփական միջոցներ (5.000.000 ՀՀ դրամ)	Նոր պացիենտներ Տարեկան 30 հետազոտություն Մուքեր 2.000.000	Տնօրեն	2021

	Մամոգրաֆիկ սարքի ձեռք բերում	Սեփական միջոցներ (25.000.000 ՀՀ դրամ)	Տարեկան 2000 հետազոտություն Մուքեր(14.000.000 ՀՀ դրամ)	Տնօրեն	2023
Լաբորատոր հետազոտությունների ընդլայնում նոր հետազոտությունների ներդրումով	Լաբորատորիայի համապատասխանեցում ISO 15189 ստանդարտին	Չի պահանջվում	Բարելավված որակ	Տնօրեն Որակի բարելավման աշխատախումբ	2021
	Լաբորատորիայի զարգացման ծրագրի մշակում	Չի պահանջում	Լաբորատորիայի զարգացման ծրագիր	Տնօրեն	2020
	Լաբորատորիայի զարգացման ծրագրի իրագործում		Մարզում առաջատար լաբորատորիա	Տնօրեն	2021,2022
Նոր գործիքային հետազոտությունների ներդրում	Սրտի էխոգրաֆիկ ծառայության իրականացում	Չի պահանջում	Նոր պացիենտներ	Տնօրեն	2020
	Անոթների դուպլեքս հետազոտության ծավալների ավելացում	Չի պահանջում	Թրոմբոէմբոլիկ բարդությունների վաղ հայտնաբերում	Տնօրեն	2020
Բուժման նոր մեթոդների ներդրում	Լապարասկոպիկ մեթոդ մանկական վիրաբուժությունում	Չի պահանջում	Փոքր ինվազիվ վիրահատությունների քանակի շատացում	Տնօրեն ՄՌԿ Վիրաբուժական բաժանմունքի վարիչ	2020-2021
	Էնդոսկոպիկ վիրահատություններ ՔԿԱ ծառայությունում	Չի պահանջում	Փոքր ինվազիվ վիրահատությունների քանակի շատացում	Տնօրեն ՄՌԿ ՔԿԱ բժիշկներ	2021-2022

	Էլաստիկ մեխերով օստեոսինթեզի մեթոդ	Չի պահանջում	Փոքր ինվազիվ վիրահատությունների քանակի շատացում	Տնօրեն ՄՌԿ Վնասվածքաբաններ	2021-2022
	Ծննդաբերության ժամանակ էպիդուրալ ցավազրկման մեթոդ	Չի պահանջում	Նոր պացիենտների ներգրավում	Տնօրեն ՄՌԿ Անեսթեզիոլոգներ	2020
	Մամոլոգիկ ծառայություն		Նոր պացիենտներ	Տնօրեն ՄՌԿ	2023
Կառավարման համակարգերի բարելավում և նոր արդյունավետ համակարգերի ներդրում	Աշխատանքային խմբերի ստեղծում	Չի պահանջում	Որոշումների արդյունավետության բարձրացում	Տնօրեն	2020
	Գործընթացների քարտեզների, նկարագրերի, ստուգաթերթերի, աշխատանքային հրահանգների մշակում և ներդրում	Չի պահանջում	Արդյունավետության բարձրացում Անցանկալի դեպքերի քանակի նվազում	Տնօրեն Աշխատանքային խմբեր	2020-2021
	Ռիսկերի կառավարման համակարգի ներդրում	Չի պահանջում	Նվազ ռիսկեր	Տնօրեն Աշխատանքային խմբեր	2020
	Մոտիվացիոն համակարգի նշակում և ներդրում	Չի պահանջում	Աշխատակիցների մոտիվացիայի բարձրացում	Տնօրեն ՄՌԿ	2020
	Ռեսուրսների էլեկտրոնային բազա	Չի պահանջում	Հասանելի տվյալներ	Տնօրեն ՏՏ մասնագետ	2021

				Ֆինանսիստ	
	Սարքավորումների համացանց	Չի պահանջում	Արագ և համապարփակ հասանելի հետազոտության արդյունքներ	Տնօրեն SS մասնագետ	2022
	Տվյալների փոխանցման էլեկտրոնային համակարգ	Չի պահանջում	Տվյալների հաղորդման և նպատակայնության բարձրացում	Տնօրեն SS մասնագետ	2021
	Պլանային հիվանդների ընդունելության էլեկտրանայի համակարգ	Չի պահանջում	Սպասելաժամանակի կրճատում	Տնօրեն SS մասնագետ	2021
	Պահեստների էլեկտրոնային կառավարման համակարգ	Չի պահանջում	Աշխատանքի արդյունավետության բարձրացում Կանխատեսումների ճշտության բարձրացում	Տնօրեն SS մասնագետ Ֆինանսիստ	2021
	Մարքետինգային ռազմավարության մշակում	Չի պահանջում	Մարքետինգային պլան	Տնօրեն	2020
	Ուսուցողական բռոշյուռներ և պոստերներ	500.000	Պացիենտների առողջապահական կրթական մակարդակի և հիվանդնոցում մատուցվող	Տնօրեն PR մասնագետ	2020

			ծառայությունների իրազեկվածության աճ		
	Ցուցահանդեսներև էքսկուրսիաներ	Չի պահանջում	Պացիենտների առողջապահական կրթական մակարդակի և հիվանդնոցում մատուցվող ծառայությունների իրազեկվածության աճ	Տնօրեն PR մասնագետ	2020-2024
	Հիվանդանոցի նոր և ժամանակակից ինտերնետ կայք	Չի պահանջում	Հասարակության և գործընկերների հետ կապի ուժեղացում	Տնօրեն SS մասնագետ PR մասնագետ	2020
	Բջջային հավելված	Սեփական միջոցներ 1.000.000	Հասարակության հետ կապի ուժեղացում	Տնօրեն SS մասնագետ	2022
	Սոցիալական պատասխանատվության ոլորտի ընտրություն	Չի պահանջում		Տնօրեն	2021
Ենթակառուցվածքների բարելավում	Կտուրի վնասված հատվածների վերանորոգում	Սուբվենցիոն ծրագրեր Սեփական միջոցներ	Բարեկարգ հիվանդանոց	Տնօրեն	2020,2021, 2022
	Ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց համար	Դրամաշնորհներ	Հարմարավետ միջավայր ֆիզիկական սահմանափակումներ	Տնօրեն	2021

	Նախատեսված հիվանդասենյակներ		ունեցողդ անձանձ համար		
	Բուժաշխատողների գերազանցության կենտրոնի հիմնում	Սեփական միջոցներ Դրամաշնորհներ Դոնորներ	Որակյալ և հմուտ աշխատակիցներ	Տնօրեն ՄՌԿ	2021
	Արևային էլեկտրական կայանների տեղադրում	Սեփական միջոցներ Դրամաշնորհներ	Խնայողություններ	Տնօրեն	2020,2021
	Արևային ջրատաքացուցիչների տեղադրում	Սեփական միջոցներ Դրամաշնորհներ	Խնայողություններ	Տնօրեն	2020-2024
	Բժշկական թթվածնի արտադրության կայան ունենալու նպատակահարմարության գնահատում	Չի պահանջում	Բժշկական թթվածնի արտադրության կայանի կարիքի հստակեցում	Տնօրեն	2020
Ֆինանսատնտեսական գործունեության բարելավում	Ծառայությունների ֆինանսական արդյունավետության գնահատում	Չի պահանջում	Գնահատված ֆինանսական արդյունավետության	Տնօրեն Գլխավոր ֆինանսիստ	2020
	Եկամտաբերության ապահովման ծրագրի մշակում	Չի պահանջում	Եկամտաբերության ապահովման ծրագիր	Տնօրեն Գլխավոր ֆինանսիստ Բաժանմունքների և	2020

				ծառայությունների ղեկավարներ	
	Վճարովի ծառայությունների գների վերահաաշվարկ	Չի պահանջում	Նոր գնացուցակ	Տնօրեն Գլխավոր ֆինանսիստ Բաժանմունքների և ծառայությունների ղեկավարներ	2020